ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխվող և լրացվող և «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի լրացվող հոդվածի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

Հոդված 301. Իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը

Իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչերը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

(301-րդ հոդվածը խմբ. 18.03.09 ՀՕ-53-Ն)

«Հոդված 301. Իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն կամ սահմանադրական կարգը տապալելուն ուղղված հրապարակային կոչերը

1. Իշխանությունը զավթելուն, տարածքային ամբողջականությունը խախտելուն, սահմանադրական կարգը տապալելուն ուղղված հրապարակային կոչերը՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Հրապարակային կոչերը, որոնք ուղղված են նույն արարքները բռնությամբ կատարելուն՝

պատժվում են կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով սահմանադրական կարգի տապալմանն ուղղված հրապարակային կոչ է համարվում Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմի փաստացի վերացմանն ուղղված հրապարակային կոչը: